

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒՆԻՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	4
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Բյուջեի եկամուտները	10
5.2. Բյուջեի ծախսերը	12
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	13
5.4. Պետական պարտք	13
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	14
6.1. Գնաճ	14
6.2. Ավանդներ	15
6.3. Վարկեր	16
6.4. Դրամական փոխանցումներ	18
7. ԱՄՓՈՓՈՒՄ	18

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Նախորդ տարիներին բարձր տնտեսական աճի հիմքում ընկած գործոնների աստիճանաբար չեզոքացման պայմաններում ՀՀ տնտեսական աճի տեմպը 2025թ. տարեսկզբին բավական դանդաղ է եղել: Սակայն վերջին ամիսներին այն սկսել է արագանալ՝ հիմնականում պայմանավորված արդյունաբերության նվազման տեմպի մեղմմամբ: Արդյունքում տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) 2025թ. հունիսին կազմել է 8.6%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 1.8 տոկոսային կետով, իսկ հունվար-հունիս ամիսների կուտակային աճի ցուցանիշը կազմել է 6.3%՝ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի համեմատ արագանալով 0.6 տոկոսային կետով:


Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %



2025թ. հունվար-հունիս ամիսների ՏԱՑ-ի աճին շարունակում է ամենամեծ նպաստումն ունենալ ծառայությունների աճը՝ շուրջ 2.3 տոկոսային կետով: Առևտրի, շինարարության և գյուղատնտեսության ոլորտները նույնպես դրական նպաստում են ունեցել ՏԱՑ-ին՝ համապատասխանաբար 1.7, 0.9, 0.5 տոկոսային կետով:


Գյուղատնտեսության ոլորտում տարեսկզբից նկատվում են դրական զարգացումներ: Մասնավորապես՝ հունվար-մարտ ամիսներին ոլորտի թողարկման աճը կազմել է 10.5%, իսկ հունվար-հունիսին՝ 7.3%: Ընդ որում, գյուղատնտեսության ոլորտի ՀՆԱ-ն հունվար-մարտ ամիսներին նույնպես աճել է բավական բարձր՝ 8.1%-ով (նախորդ տարվա հունվար-մարտի աճը՝ 4.7%, իսկ ընթացիկ տարվա հունվար-հունիսի ցուցանիշը դեռևս չի հրապարակվել):

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2025թ. հունվար-հունիսին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության ոլորտում բացասական ցուցանիշները բավականին մեղմվել են՝ հիմնականում պայմանավորված բազայի էֆեկտով: 2025թ. հունիսին արդյունաբերության ոլորտում գրանցվել է 1.2% անկում, որը մեղմվել է մայիսի համեմատ շուրջ 4.7 տոկոսային կետով: Բարելավումը շարունակում է պայմանավորված լինել բազայի էֆեկտով, քանի որ նախորդ տարվա նույն ամիսների ընթացքում նկատվում էր աճի տեմպի շարունակական դանդաղում: Արդյունքում մեղմվել է նաև կուտակային անկման ցուցանիշը՝ հունվար-հունիսին դառնալով -12.1%:

Արդյունաբերության անկումը 2025թ. հունվար-մայիս ամիսներին¹ հիմնականում պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության 21.5% անկմամբ, որի նպաստումն ընդհանուր արդյունաբերության անկմանը կազմել է 15.3 տոկոսային կետ: Հանքարդյունաբերության անկումը նույնպես շարունակվել է, սակայն ավելի փոքր չափով՝ 1.6%-ով (նախորդ ամսվա անկումը՝ 6.8%), ինչն արդյունաբերության անկմանը նպաստել է ընդամենը 0.2 տոկոսային կետով (նախորդ ամսվա բացասական նպաստումը՝ 1.0 տոկոսային կետ): Արդյունաբերությանը դրական նպաստում է ունեցել «էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ենթաոլորտը՝ 1.4 տոկոսային կետով, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաոլորտի նպաստումը շարունակել է լինել գրեթե զրոյական:


Մշակող արդյունաբերության անկումը հիմնականում պայմանավորված է «հիմնական մետաղների արտադրություն» և «ոսկերչական արտադրատեսակների արտադրություն» ենթաոլորտների (որոնց՝ նախորդ տարվա մեծ ծավալները պայմանավորված էին ոսկու վերաարտահանմամբ) 76.3% և 70.4% անկմամբ, որոնց նպաստումն ընդհանուր արդյունաբերության նվազմանը կազմել է 20.0, իսկ մշակող արդյունաբերության անկմանը՝ 28.1 տոկոսային կետ: Մշակող արդյունաբերության մյուս ենթաոլորտների շարքում էական նվազումներ են գրանցվել «խմիչքների արտադրություն», «այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն» և «հագուստի արտադրություն» ենթաոլորտների թողարկման ծավալներում՝ համապատասխանաբար 13.2%, 11.8% և 10.4%, որոնք մշակող արդյունաբերության անկումն արագացրել են 1.3, 0.9 և 0.2 տոկոսային կետով:

Մշակող արդյունաբերությանը դրական նպաստում են ունեցել «ծխախոտային արտադրատեսակների արտադրություն», «սննդամթերքի արտադրություն» և «մեքենաների և սարքավորանքի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում» ենթաոլորտները, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 5.7, 1.1 և 0.8 տոկոսային կետ: Մյուս ենթաոլորտների նպաստումները նշանակալի չեն եղել:

¹ Արդյունաբերության հունիս ամսվա տվյալները՝ ըստ ենթաոլորտների, դեռևս չեն հրապարակվել:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության աճի տեմպը շարունակում է արագանալ: 2025թ. հունիսին շինարարության աճը կազմել է 22.6%՝ մայիսի համեմատ արագանալով շուրջ 0.4 տոկոսային կետով: Աճի բարձր տեմպերը հիմնականում պայմանավորված են կազմակերպությունների և բյուջեի միջոցների հաշվին իրականացվող շինարարության աճով: Հունվար-հունիս ամիսներին շինարարության աճը կազմել է 18.5%՝ 1.4 տոկոսային կետով բարձր լինելով հունվար-մայիսի ցուցանիշից:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների ոլորտի աճի տեմպը փոքր-ինչ դանդաղել է, սակայն մնում է բարձր մակարդակում: Ծառայությունների ոլորտում 2025թ. հունիսին գրանցվել է 8.2% աճ՝ մայիսի համեմատ դանդաղելով 2.7 տոկոսային կետով:

Հունվար-հունիս ամիսների աճը կազմել է 9.8%՝ հունվար-մայիսի համեմատ դանդաղելով 0.3 տոկոսային կետով:

Ծառայությունների ոլորտի աճը հունվար-մայիս² ամիսների տվյալներով, հիմնականում պայմանավորված է «ֆինանսական և ապահովագրական գործունեություն», ինչպես նաև «տեղեկատվություն և կապ» ենթաօլորտների՝ համապատասխանաբար 17.3% և 18.9% աճերով, որոնց նպաստումները կազմել են 5.4 և 3.4 տոկոսային կետ: Աճին դրական նպաստում են ունեցել նաև մյուս ենթաօլորտները, բացի տրանսպորտային ծառայություններից, որտեղ գրանցվել է 11.8% անկում՝ ընդհանուր ծառայությունների աճին հակազդելով 1.3 տոկոսային կետով:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %




Առևտրի աճի տեմպը արագացել է, սակայն շարունակել է մնալ ցածր: Առևտրի ոլորտում 2025թ. հունիսին գրանցվել է 2.8% աճ՝ մայիսի համեմատ արագանալով 1.9 տոկոսային կետով: Կուտակային աճի տեմպը շարունակել է դանդաղել՝ հունվար-հունիսին կազմելով 3.9%՝ հունվար-մայիսի 4.2%-ի համեմատ:

² Ծառայությունների ոլորտի՝ ըստ ենթաօլորտների, հունիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ³

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %



Արտահանման ծավալների նվազման տեմպը որոշակիորեն մեղմվել է, սակայն մնում է բավական խոր անկման մակարդակում: 2025թ. հունիսին արտահանման անկումը կազմել է 15.9%, իսկ հունվար-հունիս ամիսների կուտակային անկումը՝ 52.8%: Անկման նման մեծ ծավալները հիմնականում պայմանավորված են ոսկու վերաարտահանման ծավալների չեզոքացմամբ: **Թեև անկման տեմպն աստիճանաբար մեղմվում է, սակայն դեռևս մնում է բավականին խոր մակարդակում:**

Արտահանման անկումը, ըստ հունվար-մայիս ամիսների ցուցանիշների⁴, ինչպես և ընթացիկ տարվա նախորդ ամիսներին, առավելապես պայմանավորված է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի (դա հենց ոսկու վերաարտահանումն արտացոլող ապրանքախումբն է) արտահանման շուրջ 79.8% նվազմամբ, որի նպաստումն ընդհանուր արտահանման նվազմանը կազմել է 58.5 տոկոսային կետ: Միևնույն ժամանակ, արտահանման անկմանը նպաստել են նաև «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «մանածագործական իրեր» և «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերը, որոնց ընդհանուր բացասական նպաստումը կազմել է շուրջ 1.4 տոկոսային կետ:

Արտահանմանը դրական նպաստում ունեցած ապրանքախմբերից նշանակալի է եղել «պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի


³ Արտահանման և ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

⁴ Արտահանման հունիս ամսվա՝ ըստ ապրանքատեսակների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

արտահանման 31.5% աճը, որի նպաստումն ընդհանուր արտահանման աճին կազմել է 1.5 տոկոսային կետ: Մնացած ապրանքախմբերի նպաստումներն արտահանման աճին բավական փոքր են եղել:

Եթե արտահանման աճը ճշգրտենք «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի նպաստման չափով (չեզոքացնենք վերաարտահանման ազդեցության զգալի մասը), ապա աճը կկազմի ընդամենը 1.1%: Այսինքն՝ առանց բազայի էֆեկտի արտահանման աճն այդչափ ցածր է: Դա հուշում է վերջին տարիներին արտահանման պոտենցիալի կորստի մասին:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %



Ներմուծման անկման տեմպը նույնպես մեղմվել է, սակայն մնում է բավական ցածր մակարդակում: 2025թ. հունիսին ներմուծումը նվազել է 17.1%-ով՝ նույնպես հիմնականում պայմանավորված ոսկու վերաարտահանման ծավալների անկմամբ: Հունվար-հունիս ամիսների ներմուծման կուտակային նվազումը կազմել է 38.6%:

Ներմուծման անկումը, ըստ հունվար-մայիս ամիսների ցուցանիշների⁵, առավելապես պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ներմուծման շուրջ 80.8% նվազմամբ, որի բացասական նպաստումը կազմել է 46.1 տոկոսային կետ: Ներմուծման անկմանը նպաստել են նաև «մանածագործական իրեր» և «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք» ապրանքախմբերի անկումները, որոնց բացասական նպաստումները կազմել են համապատասխանաբար 0.2-ական տոկոսային կետ:

⁵ Ներմուծման հունիս ամսվա՝ ըստ ապրանքատեսակների տվյալները դեռևս չեն հրապարակվել:


Ներմուծման աճին դրական նպաստում ունեցող ապրանքախմբերն ավելի շատ են, և դրանցից նշանակալի են «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «պատրաստի սննդի արտադրանք» և «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերի դրական նպաստումները, որոնք ընդհանուր կազմում են 2.7 տոկոսային կետ:

Ներմուծման աճը դրական կլինի, եթե հաշվի չառնենք ոսկու վերաարտահանման ծավալների փոփոխության ազդեցությունները, սակայն էական ցածր՝ 4.1%-ի չափով:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ⁶

Անվանական աշխատավարձի աճի տեմպը շարունակում է դանդաղել: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2025 թվականի հունվար-մայիսին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 5.1%-ով (նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 0.2 տոկոսային կետով)՝ կազմելով 294,009 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 4.9%-ով (նախորդ ամսվա աճը՝ 5.2%)՝ կազմելով 322,901 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է ավելի ցածր տեմպով՝ 4.7%-ով (նախորդ ամսվա համեմատ աճի տեմպը նույնն է եղել)՝ կազմելով 220,371 դրամ:


Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2024-2025թթ. հունվար-մայիսին, %



⁶ Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, հունիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)



2025թ. հունիսին նախորդ ամսվա համեմատ ՀՀ դրամն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է, իսկ եվրոյի և ռուբլու նկատմամբ՝ արժեզրկվել, ինչը հիմնականում պայմանավորված է միջազգային շուկաներում ԱՄՆ դոլարի արժեզրկմամբ: Հունիսին ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը կազմել է 384 դրամ՝ նախորդ ամսվա 387 դրամի փոխարեն: Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը արժեզրկվել է 7 դրամով՝ 436-ից հասնելով 443 դրամի՝ 1 եվրոյի դիմաց: ՌԴ

ռուբլու նկատմամբ նույնպես նկատվել է դրամի արժեզրկում՝ 1 ռուբլու դիմաց դրամի փոխարժեքը 4.8-ից դարձել է 4.9 դրամ:

Եթե համեմատենք նախորդ տարվա նույն ամիսների հետ, ապա ՀՀ դրամը հունվար-հունիս ամիսներին արժևորված է եղել ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ՝ համապատասխանաբար 1.2% և 0.2%-ով, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ արժեզրկվել է՝ շուրջ 3.6%-ով:


5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճի տեմպը արագացել է, մինչդեռ հարկային եկամուտների աճի տեմպը՝ դանդաղել: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճը հունիսին կազմել է 18.0%՝ մայիսի համեմատ արագանալով 4.8 տոկոսային կետով, իսկ հունվար-հունիս ամիսների աճը կազմել է 15.2%՝ արագանալով 0.6 տոկոսային կետով: Աճի արագացումը հիմնականում պայմանավորված է եղել այլ եկամուտներով, որոնց աճը հունվար-մայիսի 20.9%-ից հունվար-հունիսին հասել է 41.7%-ի: Բյուջեի հարկային եկամուտների աճը հունվար-հունիսին կազմել է 14.2%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 0.2 տոկոսային կետով:

Պաշտոնական դրամաշնորհների գծով մուտքերը հունվար-հունիսին՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են շուրջ 14.6%-ով՝ կազմելով 3.6 մլրդ դրամ:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



2025թ. հունվար-հունիս ամիսների հարկային եկամուտների աճին ամենամեծ նպաստումն ունեցած հարկատեսակներն են՝ ԱԱՀ-ն (աճը՝ 25.1%), շահութահարկը (աճը՝ 18.0%) և եկամտային հարկը (աճը՝ 9.3%), որոնց նպաստումներն ընդհանուր

հարկային եկամուտների աճին կազմել են համապատասխանաբար 7.0, 3.7 և 2.5 տոկոսային կետ:


Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2024թ. Հունվար-հունիս		2025թ. Հունվար-հունիս	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	5.3	5.3	14.2	14.2
Ավելացված արժեքի հարկ	-4.9	-1.5	25.1	7.0
Ակցիզային հարկ	-9.7	-0.5	20.6	1.0
Շահութահարկ	4.4	0.9	18.0	3.7
Պետական տուրք	17.4	0.4	22.3	0.6
Մաքսատուրք	1.9	0.1	0.9	0.0
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	116.3	2.4	-40.1	-1.7
Այլ հարկեր	8.5	0.3	-3.9	-0.1
Շրջանառության հարկ	16.6	0.4	25.0	0.6
Եկամտային հարկ	9.0	2.3	9.3	2.5
Սոցիալական վճարումներ	15.9	0.6	13.5	0.6

Հարկ է նշել, որ 2025թ. բյուջեով հաստատված ցուցանիշների համեմատ բյուջեի ընդհանուր եկամուտները գերակատարվել են շուրջ 36.5 մլրդ դրամով (2.6%-ով), իսկ հարկային եկամուտները՝ 9.5 մլրդ դրամով (0.7%-ով): Այլ եկամուտները (ոչ հարկային) գերակատարվել են ավելի մեծ չափով՝ 28.2 մլրդ դրամով (62.1%-ով): Միևնույն ժամանակ թերակատարվել են պաշտոնական դրամաշնորհների գծով մուտքերը՝ շուրջ 1.1 մլրդ դրամով (23.4%-ով):

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերի աճը 2025թ. հունիսին արագացել է: Ընդհանուր ծախսերը 2025թ. հունիսին աճել են 32.3%-ով՝ հիմնականում պայմանավորված ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերի աճով (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի աճը եղել է շուրջ 2.3 անգամ):

Հունվար-հունիս ամիսներին ծախսերի աճը կազմել է 19.4%, որին ընթացիկ ծախսերի աճի նպաստումը կազմել է 8.1 տոկոսային կետ, իսկ կապիտալ ծախսերինը՝ 10.7 տոկոսային կետ (ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը ընդհանուր ծախսերի աճին նպաստել են 0.7 տոկոսային կետով):

Ի տարբերություն եկամուտների ծախսերի գծով 2025թ. առաջին կիսամյակի տվյալներով առկա է էական թերակատարում՝ հաստատված բյուջեի ցուցանիշների համեմատ: Մասնավորապես, ընդհանուր ծախսերը թերակատարվել են 240.2 մլրդ դրամով (14.0%-ով), որում՝ ընթացիկ ծախսերը՝ 144.7 մլրդ դրամով (10.9%-ով), իսկ կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը)՝ 101.7 մլրդ դրամով (25.6%-ով):

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), մլրդ դրամ




Եկամուտների և ծախսերի գծով վերոհիշյալ զարգացումների պայմաններում բյուջեի դեֆիցիտը աճել է, սակայն էապես հեռու է եղել պլանավորված ցուցանիշից: 2025թ. հունվար-հունիս ամիսներին ձևավորվել է պետական բյուջեի շուրջ 39.2 մլրդ դրամի չափով պակասուրդ, այն դեպքում, երբ նախորդ տարի նույն ժամանակահատվածում բյուջեն եղել էր հավելուրդային: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ 2025թ. բյուջեով առաջին կիսամյակի համար հաստատված պլանը կազմում է 315.9 մլրդ դրամ, ինչը նշանակում է, որ բյուջեի կատարումն էականորեն շեղվել է պլանավորվածից:

5.4. Պետական պարտք

2025թ. հունիսի վերջի դրությամբ պարտքի աճի տեմպը շարունակել է արագանալ: ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ նախորդ տարվա հունիսի համեմատ աճել է 13.9%-ով (նախորդ ամսվա աճը՝ 13.5%)՝ կազմելով շուրջ 13.85 մլրդ ԱՄՆ դոլար: Նույն ժամանակահատվածում կառավարության պարտքն աճել է 14.5%-ով (նախորդ ամսվա աճը՝ 14.3%)՝ կազմելով 13.3 մլրդ ԱՄՆ դոլար: Ընդ որում, կառավարության պարտքի բաղադրիչներից ներքին պարտքը (դրամական արտահայտությամբ) աճել է 15.8%-ով, իսկ արտաքին պարտքը (դոլարային արտահայտությամբ)՝ 12.0%-ով:

Պետական գանձապետական պարտատոմսերի տոկոսադրույքները շարունակել են նվազել: Պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը (տոկոսադրույքը) 2025թ. հունիսին կազմել է 8.0%՝ նախորդ ամսվա համեմատ մնալով անփոփոխ, իսկ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ՝ նվազելով 1.0 տոկոսային կետով: Միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը նվազել է նախորդ ամսվա համեմատ 0.3 տոկոսային կետով, իսկ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ՝ 0.4 տոկոսային կետով:


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Գնաճի տեմպը փոքր-ինչ դանդաղել է՝ մոտենալով թիրախին: 2025թ. հունիսին 12-ամսյա գնաճի տեմպը կազմել է 3.9%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 0.4 տոկոսային կետով: Այն գտնվում է կենտրոնական բանկի համար սահմանված նոր՝ $3 \pm 1\%$ թիրախային միջակայքում: Այս պայմաններում, ԿԲ-ը հունիսին որոշում է կայացրել վերաֆինանսավորման տոկոսադրույքը նույն մակարդակում պահելու վերաբերյալ:


6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



Ավանդների աճի տեմպը տատանողական է վերջին ամիսներին, սակայն ընդհանուր առմամբ պահպանվում է բարձր մակարդակում: Ավանդների ընդհանուր ծավալը 2025թ. հունիսին նախորդ տարվա հունիսի համեմատ աճել է 15.4%-ով՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 1.7 տոկոսային կետով: Աճը պայմանավորված է եղել ինչպես ռեզիդենտներից, այնպես էլ ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների աճերով՝ համապատասխանաբար 16.7% և 11.4%:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




2025թ. հունիսին ավանդների աճին ամենամեծ նպաստումն է ունեցել տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճը, որի նպաստումը կազմել է 6.3

տոկոսային կետ: Տնտեսության մյուս հատվածներից ներգրավված ավանդների ծավալները նույնպես դրական են նպաստել ընդհանուր ավանդների աճին:


6.3. Վարկեր

Վարկերի աճի տեմպը արագանում է: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը 2025թ. հունիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 29.0%-ով՝ հիմնականում պայմանավորված ռեզիդենտներին տրամադրված վարկերի 29.9% աճով: Ոչ ռեզիդենտների վարկերի ծավալի աճը կազմել է 7.6%:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի կազմում աճել են ինչպես իրավաբանական անձանց, այնպես էլ տնային տնտեսություններին տրամադրված

վարկերը՝ համապատասխանաբար 31.4%-ով և 28.5%-ով, իսկ նպաստումները կազմել են 15.6 և 14.3 տոկոսային կետ: Ընդ որում, իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի աճի տեմպն արագացել է 1.7 տոկոսային կետով:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ⁷




2025թ. հունիսին բոլոր ոլորտներին տրամադրված վարկերն աճել են՝ դրականորեն նպաստելով վարկերի ընդհանուր ծավալի աճին: Առավել նշանակալի են եղել սպառողական (աճը՝ 30.6%) և հիպոթեքային (աճը՝ 30.7%) վարկերի աճերը: Դրանք ընդհանուր վարկերի աճին նպաստել են համապատասխանաբար 6.9 և 6.7 տոկոսային կետով:

⁷ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը, մլն ԱՄՆ դոլար⁸



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) կտրուկ աճել է: Դրամական միջոցների զուտ ներհոսքը 2025թ. մայիսին կազմել է 238.3 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ ամսվա համեմատ աճելով 108.6 մլն ԱՄՆ դոլարով: Արդյունքում, հունվար-մայիս ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ դրամական միջոցների զուտ ներհոսքը աճել է 13.9%-ով՝ կազմելով 511.7 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամիսների 449.4 մլն ԱՄՆ դոլարի համեմատ:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. Տարեսկզբի ցածր աճերի համեմատ՝ 2025թ. մայիսից սկսած տնտեսական ակտիվության աճի տեմպն արագացել է՝ հիմնականում բազայի էֆեկտի հաշվին: Հունիսին ՏԱՑ-ը թեև որոշակի դանդաղել է մայիսի համեմատ, սակայն հունվար-հունիս ամիսների կուտակային ՏԱՑ-ը շարունակել է արագանալ՝ հասնելով 6.3%-ի՝ հունվար-մայիսի 5.7%-ի համեմատ: Աճի տեմպի արագացումը հիմնականում պայմանավորված է արդյունաբերության անկման տեմպի մեղմմամբ:

2. Արտահանման ցուցանիշները մնում են բավական ցածր մակարդակում: Արտահանման անկման տեմպը որոշակիորեն մեղմվել է, սակայն մնում է

⁸ Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկրի կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով: 2025թ. հունիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

բավական խոր անկման մակարդակում: 2025թ. հունվար-հունիս ամիսների կուտակային անկումը կազմել է 52.8%: Անկման նման մեծ ծավալները հիմնականում պայմանավորված են ոսկու վերաարտահանման ծավալների չեզոքացմամբ: Սակայն, եթե նույնիսկ այդ մասով ճշգրտենք արտահանման ցուցանիշները, ապա աճը կկազմի ընդամենը 1.1%, որը բավական ցածր է և հուշում է վերջին տարիներին արտահանման պոտենցիալի կորստի մասին:

3. Պետական բյուջեի կատարումն էականորեն շեղվել է պլանավորվածից:

Թեև բյուջեի եկամուտների մասով փաստացի ցուցանիշները գերակատարվել են պլանի համեմատ, ծախսերն էականորեն թերակատարվել են (240.2 մլրդ դրամով կամ 14.0%-ով): Ինչպես և կարելի էր սպասել, թերակատարման էական մասը (շուրջ 101.7 մլրդ դրամը) բաժին է ընկնում կապիտալ ծախսերին: Կառավարությունը շեղվում է նախապես պլանավորված քաղաքականությունից, ինչը բնականաբար կարող է ունենալ էական բացասական տնտեսական հետևանքներ: Կապիտալ ծախսերի թերակատարումը (շուրջ 25.6%) էական բացասական ազդեցություն կարող է ունենալ տնտեսության կարևոր ենթակառուցվածքների արդիականացման ընթացքի վրա՝ դանդաղեցնելով տնտեսական զարգացումը և երկարաժամկետ աճի ներուժը: Հայտնի է, որ կապիտալ ծախսերի թերակատարման խնդիրը խրոնիկ բնույթ ունի, սակայն դրա լուծման ուղղությամբ տեսանելի քայլեր չեն ձեռնարկվում:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: